ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԴԱԿԵՐՊ ԱՐՁԱՆԻԿՆԵՐԸ
(մ. թ. ա. VII—III հազարամյակներ)

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Ա. ԵՍԱՅԱՆ

Հնագույն Հայաստանի մեզ հասած գեղարվեստական արժեքների հարուստ ու անկրկնելի ժառանգության ուսումնասիրությունը հայ արվեստի պատմության կարևորագույն խնդիրներից է։ Այն հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմելու ինչպես հազարամյակների պատմություն ունեցող գեղարվեստական երևույթների և արվեստի զարգացման ընթացքի, այնպես էլ այն պատմական միջավայրի մասին, որում ձևավորվել է այդ արվեստը։ Հնագույն արվեստի ուսումնասիրության նշանակությունը պայմանավորված է ոչ միայն մեկնաբանությունների և արդյունքների գիտական արժեքով, այլ նաև այդ արժեքների մասսայականացմամբ և պրոպագանդմամբ։

Մարդու կերպարանքը Հայկական լեռնաշխարհի հնագույն արվեստում մեծ տեղ է գրավել։ Այն ներկայացված է ոչ մեծ, սակայն շատ արժեքավոր նմուշներով՝ խոշոր և մանր պլաստիկայով, որսի, երկրագործական, ծիսական հոյակապ տեսարաններով և այլն։ Բազմաբնույթ ու բազմազան այս պատկերները մեզ են հասել նոր քարի դարի ժամանակաշրջանից, մանր քանդակի ձևով և խեցեղենի վրա արված տեսարանների ու պատկերների միջոցով։

Հոդվածում անդրադառնում ենք Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում նոր քարի դարի—վաղ բրոնզի դարի հուշարձաններից հնագիտական պեղումների և պատահական գտածոների շնորհիվ հայտնաբերված մ. թ. ա. VII—III հազարամյակների մարդակերպ արձաններին, որոնք լայն տարածում են ունեցել ամբողջ Հին Արևելքի նստակյաց, վաղ երկրագործական մշակույթներում։ Մարդկանց շատ թե քիչ պայմանական այս կերպարների կամ մարդանման երևակայական էակների ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում որպես հնագույն մարդկանց հոգևոր մշակույթի, կրոնական պատկերացումների և ծեսերի վերաբերյալ վկայությունների աղբյուր, որն իր հերթին կարող է հիմք ծառայել իրենց կերտողների էթնիկական նկարագիրը որոշելու համար։ Սակայն այս նյութերը դեռևս շատ քիչ են օգտագործվում հնագույն էթնո-մշակութային պատմության մեջ։ Սա բացատրվում է կոմպլեքսների թերիությամբ, որոնք հաճախ ներկայացված են ժամանակի ընթացքում այս կամ այն չափով վնասված առանձին օրինակներով։ Լիարժեք ուսումնասիրության համար անհրաժեշտ սերիաների բացակայությունը խոչընդոտում է առանձին կոմպլեքսների առանձնահատկությունների, ինչպես նաև տարբեր ծագում ունեցող կոմպլեքսներն իրար կապող ընդհանուր գծերի բացահայտմանը։

Ինչպես Հին Արևելքի, այնպես էլ հին Հայաստանի երկրագործները և անասնապահները մասսայաբար կերտում էին մարդու կավե քանդակներ, որոնք պեղված հուշարձանների ոչ այնքան մեծ քանակի, ինչպես նաև նյութի փխրունության պատճառով մեզ քիչ են հասել։ Գտածոների մեջ մեծ խումբ են կազմում կանացի արձանիկները։ Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ շատ կրոններում, մանավանդ նախնադարյան ժամանակներում, ամեն ինչ հանգում էր պտղաբերության, արգասավորման, կյանքի վերարտադրման, բուսական և կենդանական աշխարհի, սերունդների հարատևման ու կենսունակության համընդհանուր գաղափարին։ Ընդ որում, այս պաշտամունքը տարածված էր ամբողջ Հին Արևելքում՝ կապված պտղաբերության և «Բնության մեծ

մոր» գաղափարի հետ[1]։ Ե. Վ. Անտոնովայի կարծիքով հնագույն երկրագործների մարդակերպ արձանները արտացոլում են հողի մասին պատկերացումները, իրրև մի էակի, որն ունի կանացի հատկանիշ[2]։

Հայկական լեռնաշխարհից հայտնի հնագույն արձանիկները գտնվել են Ռ. Բրեյդվուդի և Գ. Զեմբելի կողմից պեղված մ. թ. ա. VIII—VII հազարամյակներով թվագրվող Զոյոնյութեփեսի հուշարձանից, որը գտնվում է Արևելյան Տիգրիսի վտակներից մեկի ափին, պատմական Հայաստանի Աղձնիք նահանգի Անգեղտուն գավառում, ժամանակակից Դիարբեքիրի վիլայեթի Արգանա գյուղի մոտ։

Արձանիկներից մեկը, պատրաստված կարմրա-սրճագույն և լավ հարթեցված կավից, պատկերում է կանգնած մարդ՝ լիքը կրծքով, փոքր գլխով, որի մանրամասները՝ քիթը և աչքերը, արված են թույլ փոսիկների և գծի միջոցով։ Կրծքին հենած թևերը իրարից չեն անջատված, ոտքերը չեն ընդգծված և միայն թույլ գծով անջատված են իրարից։ Ուղիղ կանգնելու համար արձանի ստորին մասը փոքր-ինչ լայն է արված և հարթեցված է։ Չնայած սեռական հատկանիշները չեն ընդգծված, սակայն կրծքի լիքությունից և ոտքերի հաստությունից կարելի է ենթադրել, որ սա կնոջ արձան է[3] (աղ. III, 1)։

Երկրորդ արձանը ավելի բարդ է և հեղինակների կողմից հրատարակվել է որպես մարդ-կենդանու արձան[4]։ Այն ունի կլոր, ծավալային մանրամասներն ընդգծված գլուխ՝ հետ սանրված մազերով, փոքրիկ կլորավուն աչքերով, կարճ և լուստով արված ուռուցիկ քթով։ Խիստ ընդգծված են այտոսկրները։ Ճակատի և աչքերի խոռոչների միջև կա փոսիկ, որտեղ, ըստ հեղինակների կարծիքի, դեկորացիայի նպատակով դրվել են գունավոր քարեր։ Վզի տակ պահպանվել է փոսիկ, որի միջոցով այս արձանի գլուխը ամրացվել է որևէ հենակի։ Նկատելով այս քանդակի պատկերագրական առանձնահատկություններից, կարելի է ենթադրել, որ այստեղ պատկերված է մարդու կամ, ավելի ճիշտ, արջի դիմակով մարդու գլուխ։ Այս տեսակետից կարելի է նշել, որ ավելի ուշ շրջանում Թեղուտի էնեոլիթյան հուշարձանից գտնվել է արջի փոքրիկ արձանիկ, որը վկայում է Հայաստանում արջի հնագույն պաշտամունքի մասին[5]։

Արձանների ժամանակագրորեն հաջորդ խումբը հայտնի է Հայաստանի վաղ երկրագործական էնեոլիթյան հուշարձաններից։ Այս խմբի հնագույն ծավալային քանդակների թվին են պատկանում կանացի երկու արձանիկ՝ գտնված Եփրատի վրա (ժամանակակից Թուրքիայի տարածքում) Կեբանի (հայկական Կապան) ջրամբարի կառուցման ընթացքում կատարված պեղումների ժամանակ, թուրքական ու եվրոպական արշավախմբերի կողմից, Տուլինթեփե հուշարձանից, որը գտնվում է Էլազիգից 21 կմ արևելք, ջրամբարի հարավային ափին[6]։

Դրանցից մեկը թրծված կավից պատրաստված կնոջ արձանիկի բեկոր է, ձգված իրանով, կլոր ազդրերով, կեսից կոտրված գեր ոտքերով։ Պահպանվել են նախաբազկի հետքերը։ Արձանիկի բարձրությունը 14 սմ է (աղ. I, 1)։ Երկրորդ արձանիկը, նույնպես պատրաստված թրծված կավից, ավելի ամբողջական

---

1 Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան. Գեղամա լեռների ժայռապատկերները. Երևան, 1971, էջ 12։ К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили. Древнейшие культуры южного Кавказа. Л., 1970. с. 162.

2 Е. В. Антонова. Антропоморфная скульптура древних земледельцев Передней и Средней Азии. М., 1970, с. 115.

3 Anadolu Medeniyetleri.—Avrupa Sonat Sergisi. Istanbul, 1983, fig. A 28.

4 Նույն տեղում, նկ. 29։

5 Ռ. Մ. Թորոսյան. Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը. Երևան, 1976, նկ. 10։

6 Ufuk Esin-Güven Arsebük. Tülin Tepe Excavations 1971.—Keban Project: 1971, Ankara, 1974, S. 154, pl. 119 (1, 2).

է մեզ հասել։ Այն ունի կլոր, դեպի ուսերը նեղացող, երկար իրան և փոքրիկ գլուխ։ Կլորավուն, կոտրված լիքը ազդրերի ձևը հնարավորություն է տալիս ենթադրել, որ այստեղ առկա է Հին Արևելքում հաճախ հանդիպող նստած, ոտքերը առաջ պարզած կնոջ արձան (աղ. I, 2)։ Այս արձանները իրենց ձևերի, ինչպես նաև ուղեկցող խեցեղեն նյութի հիման վրա թվագրվում են մ. թ. ա. V—IV հազարամյակներով և բազմաթիվ զուգահեռներ ունեն Միջագետքի Հալաֆյան և Օբեիդյան մշակույթներում, որոնք վկայում են հայկական ցեղերի և այդ մշակույթի կրողների սերտ կապերի մասին։



Աղ. I

Շատ հետաքրքիր են նույն Կերանի ջրամբարի տարածքի մեկ այլ հուշարձանի՝ Նորշունթեփեի նյութերը, որոնց թվում կան նաև մի քանի արձանիկների բեկորներ։ Այս գտածոները նույնպես թվագրվում են մ. թ. ա. V—IV հազարամյակներով։ Արձանիկներից մեկը, որից պահպանվել է իրանի բեկորը, պատկերում է նստած կնոջ՝ իրար կպած, առաջ ձգված ոտքերով, նեղացող պարանոցի հետքերով (գլուխը չի պահպանվել)։ Ձեռքերի պահպանված մասերից կարելի է ենթադրել, որ նրանք կարճ են եղել, աջը դեպի վեր, իսկ ձախը կողմ ուղղված (աղ. I, 3)։ Ինչպես նշում է այս արձանիկի հրատարակող Հ. Հաուպտմանը, նման արձանիկներ լայն տարածված են եղել Բալկաններում և Էգեյան աշխարհում[7]։ Եզակի գյուտ է նույն Նորշունթեփեից գտնված մի կավանոթի բեկոր, որի վրա պահպանվել է մարդու ռելիեֆ պատկեր։ Այն ունի երկար վիզ և կլոր գլուխ (պարանոցից ներքև իրանը չի պահպանվել)։ Ար-

[7] Harold Hauptmann. Die Grabungen auf dem Norsun-Tepe.—Keban Project 1972, Ankara, 1976, S. 87.

մունկներից ծալված ձեռքերը բարձրացված են գլխի մակարդակին[8] (աղ. III, 6)։

Զգալի քանակությամբ արձանիկներ են գտնվել Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան հատվածում։ Այսպես, ժամանակակից Վրացական ՍՍՀ Մառնեուլի շրջանի Խրամիս Դիդի-գորա վայրից և Շուլավերից գտնվել են 20-ից ավելի կավե արձանիկներ՝ նստած կանանց «նատուրալիստական» քանդակներ։ Սրանք ունեն ընդգծված ձգված կամ ծալված ոտքեր, խոշոր ստինքներ, ուռուցիկ որովայն, թույլ ընդգծված դիմագծեր՝ քիթ, հոնքեր, աչքեր[9]։ Այս արձանիկները պատրաստող հնագույն վարպետները ձգտել են կերտել գեր կանանց պատկերներ, որոնք պտղաբերության խորհրդանիշ էին։ Արձանիկները պատկերագրական այս ընդհանրության հետ մեկտեղ ունեն որոշակի տարբերություններ, որ արտահայտվում են իրանի, գլխի, ոտքերի ձևավորման մեջ. դա վկայում է Հայկական լեռնաշխարհի և Անդրկովկասի միևնույն մշակույթին պատկանող տարբեր բնակավայրերից գտնված արձանիկների տեղական առանձնահատկությունների մասին։ Միաժամանակ, ի տարբերություն հինարևելյան էնեոլիթյան երկրագործական մշակույթների, ուր մարդակերպ արձանիկները պարբերաբար օգտագործվել են տարբեր ծիսական արարողությունների ժամանակ, Հայկական լեռնաշխարհում նույն ժամանակաշրջանում սրանց օգտագործումը դիպվածային բնույթ է ունեցել և լայն տարածում է ստացել միայն վաղ բրոնզի ժամանակաշրջանում։

Ինչպես տեսնում ենք, Արևմտյան Հայաստանի տարածքից գտնված նեոլիթյան արձանիկները, ունենալով տեղական առանձնահատկություններ, հիմնականում կապվում են Առաջավոր Ասիայի Հաջիլար, Զաթալհոյուկ, Քան Հասանհոյուկ և այլ հուշարձաններից գտնված արձանիկների հետ։ Ինչ վերաբերում է էնեոլիթյան հուշարձաններից գտնվածներին, ապա սրանք, նմանվելով առաջավորասիական հուշարձաններից հայտնաբերվածներին, միաժամանակ կապվում են Միջագետքի, Փոքր Ասիայի ու Միջերկրականի երկրների, և շատ ավելի քիչ՝ հյուսիսիրանական մշակույթների հետ։ Հանգամանք, որ վկայում է Հայաստանի ցեղերի մշակութային կապերի ընդլայնման մասին։

Շատ ավելի մեծ քանակությամբ նյութեր են հասել մեզ Հայաստանի վաղ բրոնզեդարյան հուշարձաններից (մ. թ. ա. IV հազ. վերջ—III հազ.)։ Դրանց հիմնական մասը հայտնաբերվել է Սովետական Հայաստանի տարածքում գտնվող այնպիսի հուշարձանների պեղումներից, ինչպիսիք են Շենգավիթը, Մոխրաբլուրը, Ջրահովիտ և Հառիճը։ Մի քանի արձանիկներ գտնվել են Արևմտյան Հայաստանի տարածքից՝ Կորչունթեփեից, վերը նշված Նորշունթեփեի վաղ բրոնզեդարյան շերտից և Երզնկայից հյուսիս-արևելք ընկած Պուլուրից։

Վաղ բրոնզի դարաշրջանում Հայկական լեռնաշխարհի ցեղերի տնտեսական և հասարակական կյանքում տեղի են ունենում խոշոր տեղաշարժեր, որոնք իրենց արտացոլումն են գտնում նաև հավատալիքների և արվեստի մեջ։ Այսպես, օրինակ, կանանց արձանիկների հետ մեկտեղ հանդես են գալիս տղամարդու արձանիկներ, որը վկայում է հայրիշխանության առաջացման մասին։

Կանանց արձանիկներն իրենց ձևերով բաժանվում են երեք խմբի։ Առանձին խումբ են կազմում «նատուրալիստական» արձանիկները։ Այս խմբի առավել ուշագրավ նմուշ է Շենգավիթից գտնված կավե արձանիկը՝ ձեռքերը հորիզոնական մեկնած, ոտքերը լայն բացված[10]։ Արձանիկի գլուխը կոտրված է, ոտքերը և ձեռքերը տրված են կլորավուն ելուստների ձևով առանց մատների, ծնկների ընդգծման։ Ստինքներն արված են փոքրիկ ելուստներով։ Ըստ երևույ-

---

8 Նույն տեղում, աղ. 48 (5)։

9 Л. И. Глонти, А. И. Джавахишвили, К. Б. Кугурадзе. Антропоморфные фигурки Храмис Диди-гора.—Вестник Гос. музея Грузин. XXXI—В, Тбилиси, 1975, с. 95.

10 Ս. Հ. Սարգսյան. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում. Երևան, 1967, աղ. LXX։

թին արձանիկը պատկերում է երիտասարդ կնոջ։ Իր ձևերով. հատկապես ոտքերի լայն բացվածքով այն խիստ տարբերվում է միջագետքյան քանդակներից, ուր կանանց արձանիկները պատկերվում են ոտքերը միացված վիճակում (աղ. II, 8)։ Շենգավիթից գտնվել է մեկ այլ թևերի պահպանված արձանիկ (աղ. II, 3)։ Այս օրինակի մանրամասները և սեռը հնարավոր չէ պարզել։ Բացառված չէ, որ սրա ձեռքերը նույնպես կողմ են պարզած եղել, իսկ գլուխը ունեցել է սրածայր ելուստի ձև[11]։ Այս տիպի արձանիկները Հին Արևելքում շատ մեծ տարածում են ունեցել։ Այստեղից գտնվել է նաև համեմատաբար լավ



Աղ. II

պահպանված տղամարդու արձանիկ[12] (աղ. II, 9)։ Սա ամբողջ հասակով կանգնած, ծավալային ֆիգուր է, ձեռքերը խաչաձև ծալված կրծքին։ Ի տարբերություն մյուս արձանիկների, պահպանվել է կարճ վզով կլոր գլուխը, դեմքը սխեմատիկ է, ընդգծված են միայն աչքերը, ոտքերը դանգվածեղ են և լայն բացված, ընդգծված է սեռական հատկանիշը։

Իր ոճական առանձնահատկություններով շենգավիթյան պլաստիկային շատ մոտ է Մոխրաբլուրից գտնված արձանիկների խումբը։ Սրանցից երկուսը

11 С. А. Есаян. Скульптура древней Армении. Ереван, 1980, табл. I, рис. 6.
12 Նույն տեղում, աղ. 2, նկ. 2։

համեմատաբար լավ են պահպանված։ Առաջինը կրկնում է վերը նկարագրված-ները, բայց ի տարբերություն նրանց, պատկերում է ոչ թե օրիորդի, այլ դեր կնոջ։ Այս արձանիկի գլուխը, ձախ թևը և ոտքը կոտրված են[13] (աղ. I, 5)։ Առավել հետաքրքրական է երկրորդ օրինակը։ Արձանիկը տափակ է, գլուխը արտահայտված ուղղանկյուն ելուստով, առանց վիզն ընդգծելու։ Կարճ ձեռքերը մեկնված են տարբեր կողմեր, ներս ընկած պտուկներով ստինքները կիսակլոր են և ընդգծում են պտղաբերությունը։ Ոտքերը կարճ են և լայն բացված, պորտը եռանկյունաձև է, իսկ սեռական հատկանիշն ընդգծված է կարճ գծիկներով[14] (աղ. II, 5)։ Այստեղից գտնվել է մեկ այլ արձանիկի գլուխ, որն ավարտվում է ուռուցիկ ելուստով (աղ. II, 6)։ Այն ունի տափակ դեմք, ուռուցիկ քիթ, կլոր անցքավոր աչքեր։ Չնայած գլխի և դեմքի մանրամասների ընդգծվածությանը, այս արձանիկի բեկորին նույնպես բնորոշ է ընդհանուր սխեմատիզմը[15]։

Շենգավիթի արձանիկներին նման է նաև Ջրահովիտից գտնվածը։ Պահպանվել է միայն մարմնի վերին մասը, առանց գլխի (աղ. II, 11)։ Սրա ձեռքերը նույնպես կողմ են մեկնված, ընդգծված են փոքրիկ, կլոր ստինքները[16]։ Թվարկված արձանիկների նկարագրությունը պարզ ցույց է տալիս, որ Սովետական Հայաստանի տարածքից գտնվածները միմյանց հետ ոճական մեծ նմանություն ունեն։ Դժբախտաբար Արևմտյան Հայաստանի տարածքի հուշարձանները քիչ են ուսումնասիրվում և մենք հնարավորություն չունենք այնտեղի նյութերը ներկայացնել ինչպես հարկն է։

Միայն Էլազիգի շրջանում, ուր նշված ջրամբարի կառուցման ժամանակ պեղումներ են կատարվել, գտնվել են մի քանի արձանիկներ, որոնք փոքր-ինչ տարբերվում են ՀՍՍՀ տարածքից գտնվածներից։ Հետաքրքիր նմուշ է Կորուչութեփեից գտնված արձանիկի բեկորը[17]։ Սրա գլուխը արտահայտված է կոնաձև ելուստով, թույլ ընդգծված են աչքերն ու քիթը։ Ձեռքերը (ձախը չի պահպանվել) կողմ են մեկնված։ Բարձր տեղադրված կոնքերի տակ ստույգ ընդգծված են ազդրերը։ Ոտքերը վերին մասից կոտրված են, բայց նրանց դիրքից կարելի է ենթադրել, որ դրանք, ինչպես Շենգավիթի և Մոխրաբլուրի արձանիկներինը, լայն բացված են եղել։ Արձանիկի վիզը զարդարված է 3 ուռուցիկ զարդաքուղներով։ Փոքրիկ, վերադիր ծեփածո ստինքի վրա (պահպանվել է ձախը) ընդգծված է պտուկը (աղ. I, 4)։ Հիշյալ հուշարձանն ուսումնասիրող հնագետներ Մ. վան Լունը և Հ. Գյոտեբոկը այն թվագրում են մ. թ. ա. 2750—2300 թթ. և գտնված արձանիկները համեմատում են Սիրիայի ու Միջագետքի արվեստի հետ։ Այս հանգամանքը վկայում է Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի մշակութային ամուր կապերի մասին, որը նկատելի է դեռևս էնեոլիթյան ժամանակներից։ Չի բացառվում, որ նույն խմբին է պատկանում նաև Նորշունթեփեից գտնված արձանիկի բեկորը (աղ. I, 6), որից պահպանվել է միայն կրծքի կենտրոնական մասը, ընդգծված փոքրիկ, կլոր ստինքներով[18]։ Իր ձևերով այս արձանիկը հեռավոր նմանություն ունի Շենգավիթի և Ջրահովիտի արձանիկների հետ, սակայն ձգված իրանից կարելի է ենթադրել, որ սրա ոտքերը իրար կպած են եղել։

Կավե արձանիկների երկրորդ խումբն են կազմում կոնաձև հիմքով և քիչ թե շատ սկավառակի նմանվող մարմնով սխեմատիկ ոճի արձանիկները։ Այս

13 Նույն տեղում, աղ. 2, նկ. 1։

14 Б. Б. Пиотровский. Поселения медного века в Армении.—Советская археология, XI, М.—Л., 1949, с. 176.

15 Նույն տեղում։

16 С. А. Есаян. Указ. соч., табл. 1, рис. 3.

17 M. Van Loon, H. G. Güterbock. Korucutepe Excavations 1970.—Keban Project 1970, Ankara, 1972, p. 84, pl. 55 (2):

18 H. Hauptmann. Die Grabungen auf dem Norşun-Tepe, 1973.—Keban Project 1973, Ankara, 1979, S. 69, pl. 33 (3):

խմբին պատկանող արձանիկների ոտքերը բոլորովին չէին ընդգծվում։ Սա հիմք է դառնում մ. թ. ա. XII—IX դդ., այսպես կոչված. անստած կնոջ քարե արձանների հանդես գալու համար։

Կոնաձև հիմքով արձանիկների խմբին է պատկանում Էլազիգից 31 կմ արևելք ընկած Թեփեսիկից գտնված օրինակը (աղ. I, 7)։ Այս արձանիկի ձեռքերը արտահայտված են կարճ ելուստներով (պահպանվել է աջը). ստույգ ընդգծված է կլորավուն ստինքներով կուրծքը։ Նրբիրան մեջքին հագցված է գծիկներով զարդարված, վերադիր ծեփածո գոտի, որի վրա արված կլոր անցքս ըստ երևույթին ընդգծում է սեռական հատկանիշը[19]։ Մեկ այլ արձանիկ գտնվել է Պուլուրից[20]։ Այն ունի սխեմատիկ ընդգծված գլանաձև գլուխ, հորիզոնական մեկնած ձեռքեր։ Սեռական առանձնահատկությունները չեն ընդգծված։ Սակայն կուրծքը զարդարող վերադիր ծեփածո շրջանակներից կազմված մանյակից կարելի է ենթադրել, որ սա նույնպես կնոջ արձանիկ է (աղ. II, 2)։ Այս նույն տիպին կարելի է դասել Նորշունթեփեից գտնված արձանիկը (աղ. II, 1)[21]։ Սրա գլուխը կոնաձև է, դեմքն ընդգծված թույլ գծերով, իսկ թևերը, ինչպես և նախորդինը, կողմ են մեկնված։ Արձանիկի սեռական առանձնահատկությունները չեն արտահայտված, բայց պարանոցին ընդգծված չորս շարք մանյակները, որոնցից յուրաքանչյուրի կենտրոնում մեկական կլոր, խոշոր հմայիլ է կախված, վկայում են, որ այստեղ կին է պատկերված։ Հ. Հաուպտմանի կարծիքով այս արձանիկն իր ձևերով նմանվում է հյուսիսսիրիական արձանիկներին։

Կոնաձև հիմքով արձանիկներ հայտնի են նաև Սովետական Հայաստանի տարածքից, հատկապես Հառիճի պեղումներից (աղ. II, 5,7,10)[22]։ Սրանց բոլորի գլուխները կոնաձև են, ձեռքերը մեկնված կողմ կամ վեր, իսկ իրանի հիմքը զանգակաձև լայնանում է։ Սեռական հատկանիշներն ընդգծված չեն։ Սակայն կարելի է ենթադրել, որ այստեղ գտնված երկու արձանիկները կնոջ են պատկերում, իսկ մեկը, որի ուսին կա հովվի գավազան հիշեցնող կիսակլոր ելուստ, ըստ երևույթին տղամարդու արձանիկ է։ Արձանիկների այսպիսի սխեմատիզացումը, ոտքերի փոխարեն ստորին մասում գլանակոնաձև հիմքի առաջացումը բնորոշ է ոչ միայն հին Հայաստանի արվեստին։ Այն լայն տարածված է եղել Միջագետքում և հարևան այլ երկրներում։

Երրորդ խումբը կազմող սկավառակաձև իրանով արձանիկներն ունեն կարճ, երբեմն ռուդիմենտար թևեր և կիսակլոր կամ սրածայր ելուստավոր գլուխներ։ Մեկ այդպիսի արձանիկ հայտնի է Թեփեսիկից[23]։ Նրա դեմքին կետերով և գծիկներով թույլ նշված են աչքերը, քիթը և բերանը, իսկ իրանը և մեջքը զարդարված են խաչվող գծերով (աղ. III, 2)։ Վերապահումով այս խմբին կարելի է դասել Նորշունթեփեից գտնված արձանիկը[24]։ Ընդսմին պետք է նշել, որ Նորշունթեփեի արձանիկի վրա վերադիր ծեփածո խաչվող գծերով ընդգծված են իրանը և կողմ մեկնված ձեռքերը։ Իրանի կենտրոնում արված փոսիկը ընդգծում է կանացի սեռական հատկանիշը (աղ. III, 8)։ Նշակի օրինակ լինելով, այս նմուշները հնարավորություն չեն ընձեռում ճշտելու Հայաստանի սկավառակաձև արձանիկների ծագումն ու զարգացումը։ Միայն այլ շրջաններից գտնված նյութերի հետ համեմատություն անցկացնելով հնարավոր

---

[19] U. Esin. Tepecik Excavations 1968 Campaign. Preliminary Report.—Keban Project 1968. Ankara, 1970, p. 15, pl. 11 (4).

[20] H. Z. Koşay. Pulur (Sakyol) Excavations 1968. Preliminary Report.—Keban Project 1968. Ankara, 1970, pl. 9 (5).

[21] H. Hauptmann. Op. cit., pl. 33 (2).

[22] Т. С. Хачатрян. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 76.

[23] U. Esin. Op. cit., pl. 10 (2,3).

[24] H. Hauptmann. Op. cit., S. 68, pl. 33 (1).

է ենթադրել, որ Թեփեսիկից գտնվածը կնոջ արձանիկ է։ Այս տեսակետից հետաքրքիր են Ալիշարից գտնված արձանիկները, որոնցից մի քանիսի վրա պահպանվել են վերադիր ստինքներն ու կանացի սեռական հատկանիշները։ Սրանք երբեմն զարդարված են լինում լանջագոտիներով, որոնք ըստ երևույթին ընդգծում են հագուստը կամ զարդարանքը[25]։ Ավելի ուշ շրջանում հայտնի է մեկ նմուշ, գտնված Այգեվանի բազմաշերտ հուշարձանի միջին բրոնզի դարի (մ. թ. ա. XX—XVIII դդ.) շերտից[26]։



Աղ. III

Առանց սեռական հատկանիշի ընդգծման նման արձանիկներ մեծ քանակությամբ հայտնի են Կրետեից[27], Տրոյայից[28], Բեվկեսուլթանից[29], Ալաչահու-

---

[25] E. Schmidt. The Alishar Huyük. Seasons of 1928 and 1929. Part 1. Chicago, 1932, fig. 27.

[26] С. А. Есаян. Указ. соч., табл. 17, рис. 9.

[27] Т. Чайлз. У истоков европейской цивилизации. М., 1952, рис. 8. Kehusekerper, Kreta, Mikene, Santorin. Leipzig-Berlin, S. 19; S. Hood. The Minoans. The Story of Bronze Age Crete. New York, 1971, tab. 3.

[28] W. Müller. Troja. Leipzig, 1972, tab. 31 (1), 32; G. W. Blegen. Troy and the Troyans, fig. 15, 26, 30, 33.

[29] S. Lloyd, J. Mellart. Beycesultan Excavations.—Anatolian Studies, vol. VIII, London, 1960, p. 101, tab. XXVIII.

յուկից[30], Քոնիայից[31], Միջագետքից[32], Միջին Ասիայից[33] և Իրանից[34]։ Այս արձանիկներն ըստ երևույթին հանդես են եկել Կրետե-Միկենյան և փոքրասիական մշակույթներում և ապա լայն տարածում ստացել Առաջավոր Ասիայում. ներթափանցելով մինչև Միջին Ասիա։ Այն ենթադրությունը. թե սրանք կարող էին մեկը մյուսից անկախ, միաժամանակ հանդես գալ տարբեր մշակույթներում, բացառվում է այն փաստարկով, որ այս արձանիկները տիպաբանորեն մոտ են մեկը մյուսին և տարբերվում են միայն մանրամասներով։

Այսպիսով, կարելի է ասել, որ Նորշունթեփեի. Թեփեսիկի և Այգեվանի արձանիկների այս տիպը Հայաստանում հանդես է եկել մ. թ. ա. III հազարամյակից, հավանաբար, Կրետե-Միկենյան և փոքրասիական մշակույթների ազդեցության ներքո և հարատևել մինչև մ. թ. ա. II հազարամյակի առաջին քառորդը։

Բացի կավե արձանիկներից, մարդու ռելիեֆ պատկերներ կան նաև կավե անոթների վրա։ Նորշունթեփեի էնեոլիթյան շերտից գտնվել է մի անոթի բեկոր, որի ֆրա վերադիր ծեփված է մարդու պատկեր[35]։ Այն ունի կլոր գլուխ, արմունկներում ծալված, մինչև գլուխը բարձրացրած, բռունցք արած ձեռքեր (աղ. III, 6)։ Համաժամանակյա նման պատկերներ հայտնի են Վրաստանի Իմիրիս-Գորա և Արուխլոյի հուշարձաններից[36]։ Ավելի ուշ շրջանի, մ. թ. ա. III հազարամյակի նման մի պատկեր հայտնաբերվել է Կիրովականի Քոսի ճոթեր վայրից գտնված անոթի բեկորի վրա։ Մարմինը ընդգծված է իրար մեջ հազցրված ուռուցիկ, ռելիեֆ գծերով արված չորս շեղանկյունիներով, ունի կարճ իրան, փոքրիկ կլորավուն գլուխ և մատները չոած, վեր բարձրացրած ձեռքեր (աղ. III, 7)[37]։ Այն մեծ նմանություն ունի Նորշունթեփեից և Վրաստանից գտնված կավանոթների վրա եղած մարդկանց պատկերների հետ։ Գտածոն հետաքրքիր է ոչ միայն ինքնըստինքյան, այլ նաև նրանով, որ ստույգ ցույց է տալիս Հայաստանի մ. թ. ա. V հազարամյակի ցեղերի մշակութային կապը։ Միաժամանակ մարդկանց այս տիպի պատկերները մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն տեսակետից, որ հիմք են ծառայում Հայաստանի ուշ բրոնզեղարյան՝ փոսիկով արված կոնտուրով իրանից բաժանված ձեռքերը վեր բարձրացրած քարե արձանների հանդես գալու համար։

Մեկ այլ, ոչ մեծ, բայց շատ հետաքրքիր խումբ են կազմում մ. թ. ա. III հազարամյակի մարդակերպ քարի կերտվածքները, որոնք, ի տարբերություն կավե արձանիկների, հիմնականում կուռքերի արձաններ են։ Այստեղ պետք է նշել, որ Նեոլիթյան Զոյոնութեփեսի հուշարձանից գտնվել է հատակի սալին արված մարդու բարձրաքանդակ, որի քիթն ու ակնախոռոչները որոշակի

---

[30] R. O. Arzk. Les Premiers resultats des fouilles d'Alacahöyük.—Türk Tarih Kurumu Belleten, Ankara, 1937, I, fig. 20; F. Hancar. Alaca Höyök. Yena, 1938, tab. V.

[31] S. Alp. Idoll aus Sudwestanatolien.—Türk Tarih Kurumu Belleten, Ankara, 1965, XXIX, №113, tab. V; R. Dussavd. Prevdiens Illittites, Athens, Paris, 1953, fig. 14, 15; Hamit Zübeyr. Ahlalidil Hatryatl.—Türk Tarih Arkeologic ve Etnografya Dergisi. Istanbul, 1931, II, fig. en p. 82—86.

[32] M. Th. Barrelet. Figurines et Reliefs en Tepe Culte de la Mesopotamie. Tab I, fig. 10.

[33] В. М. Массон, В. Н. Сарианнди. Среднеазиатская терракота эпохи бронзы. М., 1973, рис. 3, 4, 7, 9.

[34] В. М. Массон. Средняя Азия и Древний Восток. М.—Л., 1964, рис. 36.

[35] H. Hauptmann. Die Grabungen auf dem Norsun-Tepe, 1973.—Keban project 1973. Ankara, 1976, S. 87.

[36] Л. И. Глонти, А. Н. Джавахишвили, Т. Б Кигурадзе. Указ. соч., с. 94, 95.

[37] Գ. Հ. Կարախանյան. Կանացի պատկերով հնագույն անոթ.—«Սովետական Հայաստան», 1979, № 9, էջ 8։

ընդգծված են[38]։ Սրանց թվին է դասվում Հառիճում պեղված, վարդագույն տուֆից պատրաստված մեծ, երկմասանի կուռքը (աղ. III, 5), բաղկացած կլոր գլխից և կլոր իրանից, որոնք մեկը մյուսից բաժանված են կոնքերն ընդգծող կլորավուն փոսիկներով[39]։ Արձանիկը ստորին մասում նեղանում է (հավանաբար ուղղահայաց դիրքով որևէ հենակի ամրացնելու համար)։ Այն պատկերում է պայմանականորեն մեկնաբանվող «նստած կնոջ», իր ձևերով հիշեցնելով վերը նշված կավե սկավառակաձև իրանով կանացի արձանիկները և ունի պաշտամունքային նույն նշանակությունը։

Բացառիկ կարևորություն ունեն քարե արձանների երկու այլ խմբեր, որոնք գտնվել են Այգեվանից և Շենգավիթից։ Այս արձաններն իրենց ձևերով և նշանակությամբ եզակի են ոչ միայն հին Հայաստանի, այլև Անդրկովկասի և Առաջավոր Ասիայի արվեստի ուսումնասիրության համար։ Այգեվանի կարմիր տուֆից պատրաստված արձանիկի բեկորը (պահպանված մասի բարձրությունը 5 սմ է) պատկերում է մարդու մարմնի կենտրոնական մասը՝ կլոր մեջքով և տափակ կրծքով։ Գլուխը և ստորին մասը ջարդվել են հնում (աղ. III, 4)։ Այս տիպի արձանները որպես կանոն ոտքեր չեն ունեցել։ Պարզ երևում են կլորավուն ուսերը և փոքր-ինչ նեղացող վզի ստորին մասը։ Լայն ուսերից իջնող բարակ, ուռուցիկ, արմունկներում ծալված թևերը, չորս, լայն բացված մատներով, դրված են կրծքի վրա, աջը փոքր-ինչ ներքև, իսկ ձախը վերև։ Որքան հայտնի է, այս արձանիկը ուղղակի համեմատականներ չունի ո՛չ Հայաստանում, ո՛չ էլ առաջավորասիական մշակույթում։ Սակայն կրծքի վրա ծալված ձեռքերի ձևով այն որոշ չափով մոտենում է Կրետեում և Տրոյանում լայն տարածում ունեցող մարմարե արձանիկներին, որոնց վաղ օրինակները հայտնի են մ. թ. ա. XX դարից և հարատևում են մինչև մ. թ. ա. XIII դարը։ Այգեվանի արձանիկը, որը գտնվել է մ. թ. ա. III հազարամյակի վերին շերտից, նույնպես կարող է թվագրվել մ. թ. ա. III հազարամյակի վերջով և, ինչպես կավե արձանիկների մի մասը, վկայում է փոքրասիական և Միջերկրականի երկրների մշակույթների հետ-Հայաստանի ունեցած մշակութային կապերի մասին։

Հին Հայաստանի քանդակագործության ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն ունեն Շենգավիթից գտնված երեք խոշոր կուռքերը, պատրաստված տեղական սև և կարմրավուն տուֆից (աղ. IV, 1—3)։ Նրանք բոլորն էլ գտնվել են վերին շերտի, մ. թ. ա. III հազարամյակի վերջին քառորդով թվագրվող կացարաններից մեկում։ Կուռքերը կտրվածքում կիսաօվալաձև են, կիսակլոր՝ դիմային և տափակ՝ հակառակ կողմից։ Նրանց բարձրությունը 90—95 սմ է, ստորին մասի լայնությունը՝ 50—70 սմ, իսկ վերինը մի փոքր նեղանալով հասնում է 40—42 սմ-ի։ Բոլոր երեք արձանների վերին մասում, ուր ընդգծված են գլուխները, շաղափման միջոցով արված են 2—3 սմ տրամագծով միջանցիկ անցքեր, որոնք պատկերում են աչքերը։ Նրանց կենտրոնում, փոքր-ինչ ներքև, քարի հաստության կեսի չափով (0,6 սմ), շաղափման միջոցով արված են 0,4—0,5 սմ տրամագծով փոսիկներ, որոնք արտահայտում են բերանները։ Հակառակ կողմից, աչքերից փոքր-ինչ ներքև, 1 սմ խորությամբ քարերը տաշվել են, ստեղծելով ելուստներ, որոնք ընդգծում են այս արձանների ուսերը։ Վերջին հանգամանքը պարզ ցույց է տալիս, որ արձանները կանգնած են եղել կացարանի կենտրոնում և դիտվել են բոլոր կողմերից։ Հակառակ դեպքում, եթե նրանք կանգնեցված լինեին պատերի մոտ, ուսերի ընդգծումն անիմաստ էր դառնում։

Այս արձանների հայտնագործումն առաջին անգամ պարզ ցույց է տալիս, որ հին Հայաստանում մանր քանդակի հետ մեկտեղ մ. թ. ա. III հազարամյա-

---

[38] Anadolu Medeniyetleri.—Avrupa Sanat Sergisi, fig. A 10.

[39] Т. С. Хачатрян. Указ. соч., рис. 36.

կից հանդես են գալիս նաև խոշոր արձաններ, որոնք մինչ այդ հայտնի էին միայն ուշ բրոնզի դարի վերջերից (մ. թ. ա. XIII—XII դդ.)։ Հետաքրքիր է նշել, որ Շենգավիթից գտնվել է նաև նույն կառուցվածքն ունեցող փոքրիկ (բարձրությունը 11 սմ, աղ. IV, 4), կարմիր տուֆից պատրաստված արձանիկ, որի գոյությունը վկայում է, որ եղել են նաև փոքրիկ շարժական արձանիկներ, որոնք կարող էին օգտագործվել ինչպես կացարաններում, այնպես էլ նրանցից դուրս՝ կապված հեռագնաց անասնապահության, ռազմական արշավանքների և այլնի հետ, ուղևորությունների ժամանակ, բնակատեղիից դուրս ծիսական արարողություններ կատարելու համար։



Աղ. IV

Վերը նշված արձանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Զոյոնյութեփեսիի վաղ շրջանի նյութերը միակն են Հայաստանում և այդ պատճառով դասակարգման չեն կարող ենթարկվել։ Նույնը կարելի է ասել Արևմտյան Հայաստանում գտնված էնեոլիթյան ժամանակաշրջանի արձանիկների մասին։ Վերջիններս ունեն պատկերագրական այնպիսի բնորոշ գծեր, որոնք հատուկ են Հալաֆյան, Օբեիդյան և մասամբ Միջերկրականի մշակույթների քանդակագործությանը։ Նկատվում են որոշակի նմանություններ նաև շուլավերյան խմբի հուշարձաններից գտնված արձանիկների հետ, սակայն այս նմանությունները ընդհանուր են Հին Արևելքի համար ընդհանրապես։

Հատկապես հետաքրքիր են վաղ բրոնզեդարյան արձանիկները, որոնցից միայն առաջին խմբի «նատուրալիստական» արձանիկներն են շարունակում էնեոլիթյան մշակույթի ավանդույթները։ Նույնը նկատվում է նաև Կիրովականից գտնված վաղ բրոնզեդարյան կավանոթի բեկորի վրա եղած մարդու կերպարանքի և Նորշունթեփեից գտնված էնեոլիթյան կավանոթի բեկորի վրա եղածի պատկերագրական նմանություններում։

Ին· վերաբերում է մյուս երկու խմբերի արձանիկներին (կոնաձև հիմքով և սկավառակաձև իրանով), ապա դրանք առաջին անգամ են հանդես գալիս Հայաստանում և սերտ կապեր ունեն փոքրասիական և Միջերկրականի մշակույթների հետ։ Այս հանգամանքը, ինչպես և նույն ժամանակի ցուլերի արձանների, պայտաձև օջախների ձևերը, որոնք կրում են նույն ազդեցությունը, վկայում են հարևան երկրների հետ հին Հայաստանի ունեցած մշակութային կապերի մասին։

Հատկապես կարևոր է այն քարե արձանների և կուռքերի գյուտը, որոնք զուտ տեղական ծագում ունեն և հիմք են ծառայել ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի դարաշրջանի բարձրարվեստ քանդակագործության զարգացման համար։

Վերը նշված արձանները հուշարձաններում մեկուսացված չեն հանդես գալիս։ Սրանց հետ մեկտեղ անշարժ և շարժական պաշտամունքային օջախների, կենդանիների (ցուլերի, խոյերի, ձիերի, շների, թռչունների, ձկան) կավե արձանիկների առկայությունը ցույց է տալիս, որ Հայաստանում, Կովկասում և Առաջավոր Ասիայում մ. թ. ա. VII—III հազարամյակներում լայնորեն տարածված են եղել երկրագործական և անասնապահական հաստատելիքները՝ կապված բարդ ու բազմազան ծիսակարգ ունեցող պտղաբերության պաշտամունքի հետ։

АНТРОПОМОРФНЫЕ СТАТУЭТКИ ДРЕВНЕЙ АРМЕНИИ
(VII—III тыс. до н. э.)

Доктор ист. наук С. А. ЕСАЯН

Резюме

В статье рассматривается одна из наиболее важных разновидностей изобразительного искусства древней Армении—антропоморфная скульптура. Она обнаружена на территории Армянского нагорья. Исследуются материалы малой антропоморфной глиняной пластики из неолитических слоев Чейюню-тепеси близ Днарбекира, энеолитических и раннебронзовых слоев целого ряда поселений, обнаруженных при строительстве Кебанского (арм. Քապան) водохранилища в районе г. Элязига (Турин-тепе, Поршун-тепе, Коручу-тепе, Телечнка и т. д.), и памятников эпохи ранней бронзы в Советской Армении (Шенгавит, Джраовит, Мохраблур, Арич, Кировакан и др.). Анализируются стилистические особенности деталей сульптуры. Впервые вводятся в научный оборот крупные каменные изваяния из Шенгавита. Скульптура рассматривается на широком фоне синхронных материалов памятников Закавказья и Передней Азии.